

891.990

5-64

Գ. ՄԵՍԵԱՆ

ՈՍԿԵՊՈԶԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻԻՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

891.995
564

○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7.
1913

891.99 Մ.

Մ-64.Վ

ԱԿ

FIGS. 80, 65



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ո Ս Կ Ե Պ Ո Ջ Ը

ԱՐԵՎԻԵԼԵԱՆ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ



I.

Հեռու արևելքում ապրում էր Ալ-Հարունը: Հեռ-
ւից էր լսում Ալ-Հարունի անունը, շատ հեռու էին
խօսում նրա մասին: Ու ճոխ Փարսիստանի դալար հո-
վիտներում փուռում էին Ալ-Հարունի անթիւ հօտերը:

Գոհ էր Ալ-Հարունը իր բախտից. ուրախ էր միշտ
նրա ղէմքը, բաց էր նրա ճակատը. զրոյցը միշտ բարձր,
հոգին միշտ հպարտ: Եւ նրա հպարտութիւնն ու պար-
ծանքը՝ Հիւսին էր, նրա հովիւը:

Նրան էր գովում Ալ-Հարունը ամեն տեղ, ամենին
ու ամեն ժամանակ: Ալ-Հարունի երկու խօսքից մինը
նա էր:

Դեռ առաջին իսկ օրը, երբ Հիւսին եկել էր Ալ-Հա-
րունի մօտ, երբ ուղեցել էր իր ցուպը վերցնի նրա հօտի
ետևից, Ալ-Հարունը ասել էր նրան.

—Հսիր, որդի, մեծ է Ալ-Հարունի հարստութիւնը,
լսած կը լինես անշուշտ, բայց այդ հարստութիւնից էլ
թանկ Ալ-Հարունի անունն է, որով ապրում եմ ես:

1002
1617
7197

31-23/11/76



Ալ-Հարունի բերանը դեռ սուտ չէ խօսել, դրա համար էլ Ալ-Հարունի հոգին չի տխրել դեռ, դրա համար էլ Ալ-Հարունի դուռը միշտ լիքն է պահել Աստուած: Ալ-Հարունը սիրում է բոլոր նրանց, որոնք սիրում են ճշմարիտ խօսել և դու կը լինես Ալ-Հարունի աչքի լոյսը, եթէ միշտ ճշմարտախօս կը լինես: Քո առաջին կը լինի իմ ամբողջ հօտս, ինչպէս քոնը, միայն թէ տես, պէտք է բարձր պահես Ալ-Հարունի փափախը, քո «հան» հա պէտք է լինի ինձ համար, «չէն» չէ:

Ու Հիւսին տել էր համարձակ ու լայնասիրտ այդ խոստումը:

Երբ նա հօտը Հիւսիի առաջն արաւ՝ ձեռքով ցոյց տուաւ փռած սպիտակ սուրուն ու ասաց.

— Այսօրանից սրա տէրը դուն ես, Հիւսի, պէտք է նայես սրան իբրև քո սեփականը:

Եւ սովորութեան համաձայն նա ցուպը տուաւ Հիւսիին ի նշան իր հաւատի, ի նշան, որ դրանով իր հօտն էր յանձնում: Հիւսին առաւ նրա ձեռքից մահակը:

— Եկ, ետեիցս, — ասաց Ալ-Հարունը ու մտաւ հօտի մէջ: Նա աչք էր ածում ու ոլոր-մոլոր ճամփա բանում իր շուրջը կուտակուող ոչխարների միջով՝ նրա ետեից էլ Հիւսին:

Վերջը նա սկսեց ձայն ածել, կանչել: Հօտի միջից մի սիրուն խոյ տեղն ու տեղը ոլորեց վիզը ու մի վայրկեան նայելուց յետոյ, արագ ճամփա ճղեց դէպի Ալ-Հարունը:

Ալ-Հարունը ափերի մէջ առաւ նրա բարձրացրած սիրուն դունչը ու կռացաւ համբուրեց: Յետոյ սկսեց փաղաքշել, շոյել նրա ճակատը, իսկ խոյը լիզում էր տիրոջ ձեռները ու հոտոտում: Հանեց Ալ-Հարունը գրպանից մի կտոր հաց ու սկսեց պատառ-պատառ անել: Ոսկեպոզը անմիջապէս ձեռքից խլում էր այդ պատառները:



Ալ-Հարունի խոյը հասարակ խոյ չէր:

— Հիւսի, յետոյ ասաց նա, այս ամբողջ հօտիս կը նայես ինչպէս բեզ, ինչպէս քո գլխիդ — ու նորից ցոյց տուաւ Ալ-Հարունը իր ամբողջ հօտը ձեռքը շարժելով մի ափից մինչև միւսը: — Իսկ էս մէկին, Ոսկեպոզին՝ կը նայես ինչպէս աչքիդ լուսին: Իմ հօտիս աչքը սա է, իմ ամբողջ հարըստութեանս հաւասար: Եւ բացի Ալ-Հարունից էլ ուրիշ ոչ ոքի հօտում Ոսկեպոզ չըկայ:

Ու Ալ-Հարունը աւելացրեց. — Զահէլութիւն է, հագար ու մի բան, հագար ու մի փորձանք կը պատահի քո կեանքում, ընկերներդ կաշխատեն խելքից հանել և էլի ուրիշ շատ ու շատ բաներ:

Արահ, ինչպէս էլ կուգիս, Ալ-Հարունը կը ների բո-
լորը, բայց ճշմարտախօս պէտք է լինել:
Եւ Ալ-Հարունը երբէք սուտ չէր լսել նրա բերանից:

II

Հէնց որ գիշերայ թանձր վարագոյրը պատը-
ւում էր, փարախի հանդիպակաց ժայռի ճակատը ա-
րևոտում՝ ամեն օր միևնոյն ժամին էն ժայռի ճակա-
տին էր ընկնում Ալ-Հարունի շաքը:



Հիւսին առաջին
աչքը բարձրացնե-
լիս՝ տեսնում էր Ալ-
Հարունին իր սպի-
տակ ձիու կապը
քաշած իջնելիս ժայ-
ռի կածանով:

— Բարի լոյս, Հիւ-
սի, ողջունում էր,
Ալ-Հարունը հեռւից
բարձր ու Հիւսիի
ճակատին նայելով:

— Աստու բա-
րին, տէր, պատաս-
խանում էր նոյն
կերպ Հիւսին, Ալ-
Հարունի աչքերին
նայելով:

— Ի՞նչ կայ, ի՞նչ
չը կայ, Հիւսի, հօտն
ի՞նչպէս է, Ոսկե-
պոզս ի՞նչպէս:

— Աստու լին փառք, հօտն անվնաս է, Ոսկեպոզը
լաւ:

Այս միևնոյնը Ալ-Հարունը հարցնում էր Հիւսիին
ամեն առաւօտ, ամեն Աստու լուսացած օր և ամեն
անգամ Հիւսին պատասխանում էր նրան նոյն կերպ:

Յետոյ Ալ-Հարունը հարցնում էր հանդից, արօտից,
կերից ու կաթից և Հիւսին մին-մին թւում էր նրան
ինչպէս որ կար, ինչպէս որ պատահել էր:

Եւ միշտ հօտից յետոյ, Ալ-Հարունի առաջին հարցը
Ոսկեպոզն էր, նրա մասին նա հարցնում էր միշտ ա-
ռանձին, ջոկ:

Յետոյ Ալ-Հարունը անցնում էր իր հօտի միջով,
նրան վազում, մօտենում էր Ոսկեպոզը, Ալ-Հարունը
հաց էր տալիս նրան, շոյում փաղաքշում ու ձին նըս-
տում ասպանդակում եկած ճանապարհով: Հիւսիի աչքի
առաջ անհետանում էր սպիտակ նժոյգը իր տիրոջ հետ
ժայռի կռնատակին, ու նա սպասում էր մէկ էլ հետևեալ
օրը նրա երևալուն:

III

Ալ-Հարունին յարգում էր ամբողջ գիւղը, մեծից
մինչև փոքրը:

«Աղբատը դատարկ չէր դառնայ նրա դռնից, անցու-
րը սոված չէր անցնի տան մօտով,» — պատմում էին նրա
մասին: Բայց նախանձն ու Ալ-Հարունին տւած գո-
վեստները խեղդում էին միայն հարուստ Միրզային.
Նա Ալ-Հարունի հետ միասին, միևնոյն գիւղում տե-
ղաւորել չէր կարողանում: Միրզան իր հօտերն ու նա-
խիրներն աւելի էր համարում Ալ-Հարունից, հարստու-
թիւնը մեծ, բան նրանը, բայց էլի Ալ-Հարունի մասին
աշխարհն էր խօսում, ամբողջ արևելքը, իսկ Միրզի
մասին, միայն նրա ձեռքով զրկւածները:

Նախանձը բանի գնում մեծանում էր Միրզի մէջ ու նա ասում էր Ալ-Հարունին սրտանց: Եւ պատահեց որ, մի անգամ էլ իրար դիպան գիւղամիջում Միրզան ու Ալ-Հարունը:

Ալ-Հարունը պատմում էր իր ճշմարտախօս չիւսիի մասին ու գովում, հպարտանում. Միրզան նախանձից խայթլած հեգնեց ու ծաղրեց նրա միամտութիւնը, որ հաւատում է նա մի հովււի:

Ալ-Հարունն ուզեց հերքի նրան, Միրզան միայն ժպտաց նրա վրա:

— Քոնի պէս տասը չիւսի ունեմ, ասաց նա, բոնից լաւ-լաւ մօր որդիներ. գլխիս մազերին հաշիւ կայ, դրոնովս անցած հովիւներին՝ ոչ:

Ալ-Հարունի դէմքը խոժոռուեց, կասկածը մի բոպէ պղտորեց նրա սիրտը առաջին անգամ. բայց զայրացաւ մին էլ, երբ յիշեց, որ ինքը դեռ երբէք չի կասկածել չիւսիի վրա, դեռ իրենն ո՛չ ոք այդպիսի բան չի ասել, և մի ձայն նրա ներսից ասաց, թէ ինքը իրաւունք ունի զայրանալու:

Ու զայրացաւ Ալ-Հարունը. արիւնով պղտորւած աչքերը խոժոռուեց նա թաւ յօնքերի տակից Միրզի վրա, բռունցք արաւ ու գոչեց.

— չիւսին ինձ չի խաբի:

— Կը խաբի, կը խաբի, նոյնքան հանդարտ, որքան Ալ-Հարունը զայրացած, պատասխանեց Միրզան մի թեթեւ ժպիտով:

Հեգնանքը սուր էր, անցաւ Ալ-Հարունի միջով— գլխից մինչև կրունկը:

— Զի խաբի, ասում եմ,— համարեա գոռաց Ալ-Հարունը:

— Կը խաբի՝ ասում եմ:

— Հօտս վէր եմ դնում:

— Կը սխալւես, ամսոս է:

— Ամբողջ հօտս վէր եմ դնում, ասում եմ— գոռաց Ալ-Հարունը բուրբի մէջ,— եթէ չիւսին ինձ սուտ կասի:

— Իմ հօտը բոնից մեծ է, բոնին խառնիր՝ եթէ չի ասի:

— Գրահ:



— Գրահ:

Էստեղ մարդիկ մէջ եկան ամբոխից ու Ալ-Հարունի ու Միրզի իրար կպած ձեռքերը բաժանեցին:

Գրազը գրազ էր, տանողը տիրանում էր միւսի ամբողջ հօտին: Ալ-Հարունը ժամանակ տւաւ նրան մի քանի ամիս, Միրզան ասաց՝ մի քանի շաբաթն էլ բաւական է: Ամբոխը ցրւեց:

Ալ-Հարունն ու Միրզան էլ իրարից հեռացան:

IV

Արևը տալիս էր ժայռի ճակատին՝ Ալ-Հարունը ողջունում էր հեռւից:


— Բարի լոյս, Հիւսի:

— Աստծու բարին, տէր:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ, Հիւսի, հօտն ի՞նչպէս է, Ոսկեպողը ի՞նչպէս:

— Աստծուն փառք, հօտն անմխաս է, Ոսկեպողը՝ լաւ:

— Ապրես Հիւսի, հալալ լինի կերած կաթդ:— Ու մօտենում էր ամեն անգամ Ալ-Հարունը, համբուրում իր ճշմարտախօս հովւի ճակատը: Եւ այսպէս շարունակ անցնում էին օրերը և այսպէս կրկնւում Ալ-Հարունի սովորութիւնը: Հիւսին երբէք չէր մտածում առաջուց, թէ ինչ պատասխան պէտք է տայ իր տիրոջը հետևեալ օրը:



V

Մի օր էլ մութ, ակնաւոր գիշեր էր: Հիւսին ոչխարը նոր տեղաւորել, բուխարու կողքին էր, որ յանկարծ շան հաշոց վեր կացաւ դուրսը: Մարդահաշ էր. Հիւսին դուրս թռաւ խսկոյն: Փարախի դռնից մի անգամ ծղրտաց նա. ապա հրացանի բերանից բոցը ձագառաձև ճղեց խաւարը ու Հիւսին վազեց հաշոցի վրա, շներին սիրտ տալու:

— Ա՛յ հովիւ, ա՛յ հովիւ...— լսեց կտոր, կտոր, հաշոցի միջից Հիւսին:

— Ա՛յ շուն, ա՛յ շուն...— շարունակեց յետոյ նոյն ձայնը:

Հիւսին տեսաւ որ սխալւել է՝ վազեց առաջ դէպի շները, գայրոյթով սաստելով նրանց:

— Շներդ կերած էին ինձ, աֆերիմ շներ, ամենը մի թամբած ձի արժի,— գովեց անձանօթ ձայնը խաւարի միջից:

— Ա՛յ շուն, ա՛յ շուն, կորէք, կորէք հա...— դեռ սաստում էր Հիւսին իր գրգոււած շներին:

Երբ շները լսեցին՝ Հիւսին առաւ նրա «բարի երեկոն» ու պատասխանեց ինքն էլ:

Երբ նրանք բինան մտան, կրակի ծխի ու ճրագի մրի տակ Հիւսին տեսաւ մի 18—19 տարեկան գեղեցիկ հասակով ու պատկերով երիտասարդ:

Նստեցին զրոյցի. զրոյցը երկարեց: Հիւսը գրաւել էր Հիւսիին իր քաղցը խօսքով: Սօսեցին գիւղից, շահէններից, հարսանիքներից, յետոյ էլ ուրիշ բաներից:

Գիշերն անցնում էր. Հիւսին նոր յիշեց ու ճրագն սռաւ, մտաւ փարախը: Քիչ յետոյ, քաշէ քաշ մի ոչխար բերաւ իրեն հետ ու վէր գցեց կրակից քիչ հեռու. բայց դեռ դանակը չըմօտեցրած՝ միջամտեց հիւրը.

— Անունդ ի՞նչ է, հովիւ,— հարցրեց նա.

—Հիւսի:

—Լսիր, Հիւսի, ասաց, թող էտ ոչխարը. ինձպէս հիւր ամեն հովիւ չի ունենում և ոչ էլ դու կը լինես ունեցած երբ և իցէ: Ցոյց տուր շնորքդ, որ իգիթ ես, որ հիւրին վայել պատուել գիտես... Ոչխար ամեն հովիւ կը մորթի, էտպիսի ոչխար ամենի համար...

Էնպէս յանկարծակի բերին Հիւսիին այս խօսքերը, որ նա ետ քաշեց ոտքը, ու վէր պցած ոչխարը թափահարեց իրան, վեր թռաւ ու փախաւ, տուաւ հօտի միջին:

—Այ տղայ, ի՞նչու ես էտպիսի խօսքեր ասում, իմ բինից դեռ առանց օրհնանքի մարդ չի հեռացել. շէն պահի Աստուած Այ-Հարունի օջախը, հօտը որ կիսեն՝ ունքը փուտ չի պցիլ: Թէ սրանում մի բան գիտե՞ս, համեցէ՛ք, ուրիշը բռնեմ:

Հիւսին գնաց բերաւ մի ուրիշը:

Հիւրը ծիծաղեց նրա վրա—«էտ էլ թող»:

Հիւսին էտ էլ թողեց ու հիմա երկուսով ճրագը առած մտան նստած հօտի մէջ:

Հիւսին իրար ետևից ցոյց էր տալիս շարունակ ու հարցնում.

—Այս, այս... այս.—իսկ հիւրը առանց ձայն հանելու որոնում էր աչքով ու առաջ գնում:

Լոյսի վրա վեր կացաւ տեղից Ոսկեպողը ու նստոտած ընկերների գլխներով ցատկոտելով մօտեցաւ Հիւսիին, սկսեց հոտոտել նրա ձեռներն ու գրպանները:

—Չըկայ, չըկայ, քեզ մատաղ,—ասաւ ու կուացաւ համբուրեց նրա դունչը Հիւսին:

—Սա բռնիր,—կանգ առաւ ու ձեռքը մեկնեց հիւրը Ոսկեպողի վրա:

Ոնց որ մուրճով տաս Հիւսիի գլխին:

Նա բերանը բաց արաւ, բայց դեռ չէր վերջացրել իր խօսքը, թէ դա իր հօտից առաւել է, թէ այդ անել չի կարող՝ որ հիւրը արագ ետ քաշեց ետփրնջու եր-

կու փեշերը ու պոկեց գլխից բաշուղը:

Հիւսիի աչքերը վառւեցին ու միտքը մթնեց. նրա դէմ կանգնած էր մի շնաշխարհիկ գեղեցկուհի...

—Բռնիր երկնւր, երեքը, որն էլ կուգես հօտիս մի-



ջից՝ գլուխը կտրեմ իսկոյն, միայն թող էտ մինը,— խընդրում էր նա...

—Հէյ, ամօթ քեզ համար. ե՞ս պէտք է քո խնդիրը կատարեմ, քո կրակիդ մօտ,—ընդհատեց աղջիկը Հիւսիին: Երբ այդպէս է, թէ ամբողջ հօտդ էլ մորթոտես

հիմա, մի պատառ չեմ վերցնել... լսել էի Ալ-Հարունի անունը. էտ դ՞ո՞ւ էս նրա Հիւսին:

Քրտինքը հատիկ - հատիկ դուրս տուաւ Հիւսիի ճակատին. նրան յանդիմանում էր մի կին, մի գեղեցկուհի, էն էլ իր օջախի, իր սուրուի կողքին. նրա ուղեղը յանկարծ տաքացաւ, ու մէկ էլ արագ բռնեց Հիւսին Ոսկեպողի պոզերից:

Մի կողմ նետեց աղջիկը ետիւրնջին, փէտ տուաւ կրակին, պատրաստեց պղինձն ու շամփուրները՝ մինչև Հիւսին մաշկեց ու կտոր կտոր արաւ Ոսկեպողին:

VI

Ծէգը տալիս հօտի ծայրը դուրս եկաւ փարախից: Հիւսին՝ ոնց որ մի ծանր երազից զարթնի. լոյսը սև էր երևում աչքին: Հիմա տեսաւ, որ Ոսկեպողը չըկար և նրան թւում էր թէ ողջ սուրուի կէսն էր պակասել:

Սուրուի տուտը կտրւեց փարախից և փուլեց: Հիւսին մնաց բինի դռանը. արևելքը կարմրում էր, որտեղ որ էր պէտք է երևար Ալ-Հարունը դիմացից:

«Ի՞նչ պէտք է ասեմ», մտածում էր Հիւսին, մտածում էր, բայց ոչինչ գտնել չէր կարում: Ճիշտը յայտնել անկարելի էր, դրա մասին չէր մտածում.— խայտառակ կը լինի ինքը ու խայտառակ կանի Ալ-Հարունին: Բայց ի՞նչ ասէր, որ հաւատար Ալ-Հարունը, Ալ-Հարունը, որ չասածից շատ բան է հասկանում քան թէ ասածից. ո՞նց թագցնէր:

Հիւսին մտածում էր մի սուտ, հաւանում որ համոզիչ է, բայց երբ երևակայում էր իրեն Ալ-Հարունի առաջ՝ զգում էր, որ կը շփոթւի: Մտածում էր ուրիշը՝ դարձեալ: Հիւսին շատ անհանգիստ էր: Վերջը վեր առաւ նա իր մահակը, տարաւ ցցեց դիմացը գետնին, վերցրեց ետիւրնջին ուսերից իր փափախը դրաւ մահակի գլխին ու ասաց.

— Սա, ասենք թէ ես եմ, Հիւսին. ես էլ՝ իմ տէրս, Ալ-Հարունը: — Ու Հիւսին արագ հեռացաւ մի քիչ դէպի տան կողմը, ու աշխատելով Ալ-Հարունին նմանելի ձայնով ու դէմքով՝ մօտեցաւ նորից մահակին.

— Բարի լոյս, Հիւսի:

— Աստու բարին, տէր, — պատասխանեց դարձեալ ինքը մահակի փոխարէն:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ, Հիւսի. սուրուն ի՞նչպէս է, Ոսկեպողը ինչպէս:

— Սուրուն ողջ է, անփսաս, տէր, միայն Ոսկեպողը... Երէկ երեկոյեան ոչխարը թողի Բարբարոտ սարի լանջին, ես մի քիչ առաջ եկայ գոմերը քերելու. մինչև պրծայ՝ գնացի տեսնեմ Ոսկեպողը արածելով դուրս է եկել մի բերծի ծէր ու էնտեղից գլորւել:

— Էհէյ Հիւսի, չասեցի, թէ սուտ չըխօսեմ. իմ հօտիս մէջ հազար գլուխ ոչխար կայ, բա հէնց Ոսկեպողը գլորւեց...

— Չէ, էս չեղաւ, ասաց ինքն իրեն Հիւսին ու նորից ետ գնաց, նորից եկաւ.

— Բարի լոյս, Հիւսի:

— Աստու բարին, տէր:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ, սուրուն ի՞նչպէս է, Ոսկեպողս ինչպէս:

— Սուրուն ողջ է, անփսաս, բայց Ոսկեպողը... Երէկ ոչխարը ջուրը վեր արի, Ոսկեպողը չերևաց աչքիս, ասի, առաջին կը լինի: Չուր խմեցին՝ չըտեսայ. դու մի ասիլ սարի մէկէլ



երեսովը վէր է գալիս դէպի Պուճուրը ջուրը ու ձորումը գէլը խեղդում է:

— Էհէյ Հիւսի, չասեցի՞, որ սուտ չասես. հազար ոչխարիցս հէնց մենակ Ոսկեպողը ջուրեց...

— Չէ, էս էլ չեղաւ:

Երրորդ անգամը եկաւ. նոր պատճառ բերաւ, էլի չըհաւատաց տէրը: Զորրորդ անգամը եկաւ— էլի սուտ թւաց... Բարկացաւ վերջապէս Հիւսին ու արագ ու վճռական քայլերով նորից ետ գնաց:

Արևելքը ոսկիանում էր, որտեղ որ էր արևը կը գար, որտեղ որ էր Ալ-Հարունի ձին կերևար:

Հիւսին մօտեցաւ մահակին, այժմ բարկացած դէմ-քով.

— Բարի լոյս, Հիւսի.

— Աստծու բարին, տէր, պատասխանեց ինքն էլ սառը:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ, ոչխարը, Ոսկեպողը ի՞նչպէս են:

— Փառք Աստծու, սուրուն ողջ է ու անվասա, բայց Ոսկեպողը մորթել եմ:

— Ի՞նչպէս թէ մորթել, — զայրացաւ Ալ-Հարունի տեղակ մէկ էլ:

— Սպասիր պատմեմ, տէր, — ու սկսեց.

— Կէս գիշերին շները վէր կոխեցին, մինը կանչեց դռնիցը. դուրս եկայ, ներս բերի: Ետփընջին ուսերիցը վէր կալաւ, տեսնեմ մի 18 տարեկան սիրուն աղջիկ. սաղ սուրուի միջից որ ոչխարն ուղեցի մորթեմ՝ ձեռքս բռնեց: Թէ Ոսկեպողը կը մորթես, ասաց՝ հօ կը մնամ, թէ չէ, շներից անցկացրու գնամ: Գլուխս վեր չըկալաւ, չըզիտեմ զու սնց կանէիր, տէր, միայն թէ ես Ոսկեպողը մորթեցի նրա համար...

— Ապրես, Հիւսի, ասաց ուրախ Ալ-Հարունի տեղակնա, ու արագ մօտեցաւ համբուրեց մահակի գլուխը: Յետոյ վեր կալաւ փափախը, թափ տւաւ, ծածկեց,

ետփընջին գցեց ուսերին ու մահակն առաւ շարժեց հօտի ետևից:

Հիւսին ուրախ էր հիմա այնպէս, որ ասես թէ Ոսկեպողը չէր մորթել: Քիչ յետոյ, ճիշտ որ երևաց Ալ-Հարունը:

— Բարի լոյս, Հիւսի, — սովորական խաղաղ ձայնը ողջունեց նրան:

— Աստծու բարին տէր:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ, Հիւսի, սուրուն անվասա է, Ոսկեպողը ի՞նչպէս է:

— Փառք Աստծու, սուրուն ողջ է ու անվասա, միայն թէ Ոսկեպողը երեկ մորթեցի:

Հիւսին այնպէս հանգիստ ասաց, որ Ալ-Հարունը չըհաւատաց:



—Ինչպէս թէ, Հիւսի:

—Ահանջ դիր, պատմեմ: Ու Հիւսին սկսեց մէկ-մէկ պատմել այն բոլորը, ինչ որ բիչ առաջ, մահակը պատմել էր իրան: Երբ նա վերջացրեց իր պատմութիւնը և վերջն էլ, թէ ինչպէս էր փորձել սուտ ասի՝ Ալ-Հարունը աչքերը ուրախութեամբ լիբը, մօտեցաւ Հիւսիին ու համբուրեց նրա ճակատը.

—Հալալ լինի իմ աղ ու հացը քեզ, հալալ լինի ծր-ծածդ կաթը, Հիւսի: Շատ լաւ ես արել, որ մորթել ես. քո տեղակ ես լինէի, Ոսկեպողի տեղակ էլ երեք Ոսկեպող՝ բոլորն էլ կը մորթուէի:

Ալ-Հարունն իսկոյն մատը կծեց, թէ որտեղից էր դրա ծայրը և ով էր եղել այդ աղջիկը:

Գրապը տարած էր. Հիւսիի ճշմարտախօսութիւնը խառնեց հարուստ Միրզի հօտը Ալ-Հարունի հօտին:

Ու Ալ-Հարունի փափախը միշտ մնաց բարձր ամբողջ Փարսիստանում, ճակատը միշտ բաց, ու նա միշտ պարծենում էր, որ Հիւսիի պէս հովիւ ունի:

Գ. Մեսեան



„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ. Խնկոյեանի 25 կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վողըւիլ. 10 »
3. Աղէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերագարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Գալաչեան — Կապիկներ, ընագիտական
զրոյց 10 »
5. Մարկ Տէն—Մահեան օղակը. պատմածք,
թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիկովիչ—Պատիկ նաւաստին. պատ-
մածք, թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան—Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներից 20 »
8. Է. Սէտոն-Տոմպսոն—Վիսիպեկի գայլը. պատ-
մածք հերոս կենդանիների կեանքից, թարգ.
Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Ջելլերտ—Առասպելական հե-
րոսներ. թարգմ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուբէն Գաբրիէլեան—Ովկիանի թագաւորը.
Կէտի մասին, ընագիտական զրոյց 10 »
11. Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-
պետը. Իտալական հէքիաթ. Ռուսերէնից
թարգմ. Յովհ. Թումանեան 10 կ.
12. Խ. Բ. Բարայեան—Նոր ընկերուհի Մանկա-
կան պիէս, մէկ արարւածով: 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպոզը, Արեւելեան աւան-
դութիւն 10 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“.

Զրի յաւերած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

«Ազգային գրադարան»



NL0399939

11297